

Սիրելի հայրենակիցներ,

Այս տարուայ ամառնային արձակուրդներու նախորդող ամիսը յատկանշուեցաւ տխուր դէպքով մը՝ Յուլիս 11-ի Մարիի ռազմակայանի ահաւոր պայթիւնին պատճառով: Այս հզօր պայթիւնը ո՛չ միայն ցնցեց ամբողջ Կիպրոսը՝ խլելով 13 անմեղ անձերու կեանքեր, այլ նաեւ նշմարելի հետք ձգեց նախանցեալ տարուրնէ Կղզիէն ներս աստիճանաբար վատթարացող տնտեսական իրավիճակին վրայ: Յաջորդող ամիսներուն, այս ցաւալի իրադարձութեան հետեւանքները զգալիօրէն բացասական հետեւանք ունեցան Զանրապետութեան բոլոր նախարարութիւններուն մօտ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով: Կառավարութիւնը գօտեպնդուելով՝ վերատեսութեան ենթարկեց պետական ամավարկը եւ նպաստներու յատկացումը: Այս բոլորէն զերծ չմնաց նաեւ Ներքին Գործոց Նախարարութիւնը, որ 2011-ի սկզբնաւորութենէն, Կիպրոսէն ներս տիրող անգործութեան աճին առաջքը առնելու համար, արդէն իսկ դիմած էր շարք մը ներքին օրէնքներու փոփոխութեան: Վերջին իրադարձութիւններու լոյսին տակ, նախարարութիւնը ալ աւելի խստացուց օտարահպատակներու աշխատանքային ու կեցութեան իրամասններու գործընթացը:

Դժբախտաբար, մեր երկրին ընդհանուր վիճակը, տնտեսական եւ քաղաքական ոլորտներէն ներս, ներկայիս շատ փայլուն չէ եւ, հաւանաբար, աւելի դժուար օրեր պիտի դիմագրաւենք: Երեսփոխանական Գրասենեակ սկսած են ներկայանալ զգալի թիւով հայորդիներ, որոնք անգործ են

Եւ դժուարութիւն ունին նորոգելու իրենց կեցութեան հրամանները: Շատեր, մանաւանդ անոնք, որոնք տարիներ առաջ անօրէն մնացած են եւ կամ ներկայիս հրաման չունին Կիպրոս մնալու, սկսած են մերժումի նամակներ եւ երկիրը անմիջապէս լքելու հրահանգներ ստանալ: Սակայն, ինչպէս միշտ ըսած են, դարձեալ կը շեշտեն, առաւելագոյնս պիտի ընեն օգտակար հանդիսանալու եւ ամենակարեւորը՝ անրապնդելու կիպրահայ համայնքին իրաւունքներն ու շահերը, շրջանցելու մեր երկրէն ներս տիրող այս դժուար ժամանակահատուածը:

Ակնարկ մը նետելով մեր երրորդ եռամսեայի գործունէութեան վրայ, կրնամ ըսել, թէ բաւական աշխոյժ գործունէութիւն մը ունեցանք, հակառակ Օգոստոս ամսուայ ամառնային արձակուրդներու ընդմիջումին:

Յուլիս 9-23 Նարեկ Յայկական Վարժարաններու շրջանաւարտները, ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու, երկրորդ տարին ըլլալով այցելեցին Յայաստան եւ անմոռանալի յիշատակներով վերադարձան Կիպրոս: Այս մասին անդրադարձած ենք «Լրատու»ի յաջորդող էջերուն մէջ:

Օգոստոս 11-ին, Լիմասոլի նաւահանգիստին մէջ, մեծ շուքով տեղի ունեցաւ «Արմենիա» նաւը դիմաւորելու արարողութիւնը, ներկայութեամբ Կիպրոսի եւ Յայաստանի Յանրապետութիւններու նախագահներուն եւ բարձրաստիճան անձնաւորութիւններու: Այս գծով, ընդառաջելով ու գործակցելով ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանութեան հետ, պատմական այս շրջապտոյտին աւարտը նրկիրուեցաւ Յայաստանի Յանրապետութեան անկախութեան 20-ամեակին: Յաւելեալ տեղեկութիւններու համար ընթերցել «Լրատու»ի էջ 5:

Սեպտեմբեր 15-23 մեկնեցայ Յայաստան, մասնակցելու Սփիւռքի Կազմակերպութիւններու Ղեկավարներու եւ Ներ-

կայացուցիչներու Համահայկական Համաժողովին: Սօս 500Է աւելի մասնակիցներով, կրնամ ըսել թէ բաւական արդիւնաւէտ համաժողով մըն էր: Մանրամասնութիւնները ընթերցել «Լրատու»ի 6-րդ էջին մէջ:

Նշեն, թէ Կիպրոսէն մեկնելէս քանի մը ժամ առաջ միայն, ՀՀ Սփիւռքի Նախարարը հեռաձայնային կապ հաստատելով ինձի հետ տեղեկացուց, թէ ՀՀ Նախագահը զիս պիտի պարգևատրէ «Մխիթար Գոշ» շքանշանով: Այս լուրը մեծ անակնկալ էր ինձի համար եւ չափազանց յուզուած ու զգացուած՝ ճամբայ ելայ դէպի Հայրենիք:

Գալով ձեր բոլորին կողմէ շատ սպասուած «Հայերը Կիպրոսի Մէջ» վաւերագրական ժապաւէնին, Մայիս ամսուայ ցուցադրութենէն ետք, ընդառաջելով ժողովուրդին փափաքին, որոշեցինք յունարէնի կողքին պատրաստել նաեւ անգլերէն տարբերակը: Ուրախ եմ յայտնելու, թէ ժապաւէնը Նոյեմբեր 7-էն սկսեալ անվճար կրնաք ստանալ Երեսփոխանական գրասենեակէն:

Խօսքիս վերջաւորութեան կը փափաքիմ ձեր ազնիւ ուշադրութեան յանձնել, թէ այս տարուայ մեր գրասենեակի մշակութային միջոցառումը երկրին տնտեսական անբարենպաստ պայմաններուն պատճառով, յետաձգուած է յաջորդ տարուան: Մանրամասնութիւնները պիտի փոխանցենք «Լրատու»ի յաջորդ թիւով:

Վարդգէս Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Նարեկ Հայկական Վարժարաններու 2011 տարեշրջանի
շրջանաւարտներուն այցը Հայաստան



Կիրակի, 10 Յուլիս 2011-ին, երկրորդ տարին ըլլալով, Նարեկ Հայկական Վարժարաններու շրջանաւարտները, ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու, 10-23 Յուլիսին այցելեցին Հայաստան: Ինչպէս տեղեակ էք, այս շրջապտոյտը Պրն. Մահտեսեանի խոստացած նուէրն էր շրջանաւարտներուն, որ կ'իրականանայ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան «Արի Տուն» ծրագիրի ծիրէն ներս:

Այս տարուայ խումբը մեծ խանդավառութեամբ վերադարձաւ Կիպրոս: Անոնք յիշատակելի զգացումներով պատմեցին իրենց այցելած տեսարժան վայրերուն եւ ունեցած առաջին տպաւորութիւններուն մասին, երախտագիտութիւն յայտնելով Պետական Ներկայացուցիչին, որ իրենց առիթը ընծայեց այցելելու Հայրենիք:

Ըստ ընկերակցող ուսուցիչներուն, «Արի Տուն» ծրագիրի յայտագիրը ճոխ եւ բծախնդրութեամբ պատրաստուած էր:

Յիշենք, թե այս տարուայ մասնակցողները, ընկերակցութեամբ իրենց հիւրընկալող ընտանիքի տարեկից բարեկամին, երկրորդ շաբաթը մնացին Աղվերամի ճամբարին մէջ:

Նիւթական օժանդակութեան ապահովում Կիպրահայ մարզիկներուն

Յամահայկական խաղերու Կիպրոսի Յանձնախումբին խնդրանքին ընդառաջելով, Պրն. Վարդգէս Մահտեսեան կարողացաւ Կիպրոսի Մարզական Կազմակերպութենէն (KOA) 7,000 եւրօ ապահովել Կիպրահայ մարզիկներուն: 11 Օգոստոսի 2011-ին, 18 մարզիկներ մեկնեցան Յայաստան՝ մասնակցելու Յամահայկական խաղերուն, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ:

«Արմենիա» նաւի ժամանում

Յայրենի «Արմենիա» նաւը եօթը հոգինոց անձնակազմով եւ գլխաւորութեամբ Զօրի Բալայեանի, աշխարհի շուրջ շըրջապտոյտի ելած իր երկու տարուայ առաքելութիւնը աւարտելով, Յինգշաբթի, 11 Օգոստոս 2011-ին խարիսխ մետեց Լիմասոլի նաւահանգիստը:

Երեսփոխանական Գրասենեակը, ընդառաջելով եւ համագործակցելով Յայաստանի Յանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան հետ, կազմակերպեց պաշտօնական դիմաւորման արարողութիւնը, Լիմասոլի քարափին վրայ՝ միջոցառումը նուիրելով Յայաստանի Յանրապետութեան անկախութեան 20-ամեակին:

Արարողութեան ներկայ գտնուեցան Յայաստանի եւ Կիպրոսի Յանրապետութիւններու Նախագահներ Սերժ Սարգսեան եւ Տիմիթրիս Խրիստոֆիաս, երկու երկիրներու բարձրաստիճան անձնաւորութիւններ, մեծ թիւով դեսպաններ եւ Կիպրահայ հասարակութիւնը:

Գիտարշաւի ղեկավար Զօրի Բալայեանի զեկուցումէն ետք, յաջորդաբար խօսք առին երկու երկիրներու նախագահները, վեր պահելով Կիպրոսի եւ Յայաստանի միջեւ գո-



յութիւն ունեցող սերտ յարաբերութիւնները: Տիկին Սոնա Կարկալոյեանի զոյգ երգերու մեկնաբանութեամբ եւ «Սիփան» պարախումբի պարերու ներկայացումով, վերջ գտաւ օրուայ հանդիսութիւնը, որուն յաջորդեց հիւրասիրութիւն:

Նոյն գիշերը, այս ուրախ առիթով եւ սեղմ շրջանակի մէջ, Կիպրոսի Զանրապետութեան Նախագահի Քելլաքի ամառանոցին մէջ տեղի ունեցաւ ընթրիք, որուն հրաւիրուած էին Զայաստանի Զանրապետութեան Նախագահը, իր անմիջական օգնականներով, ԶԶ Յունաստանի եւ Կիպրոսի դեսպանը եւ Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչը:

«Սփիւռքի Կազմակերպութիւններու Ղեկավարներու եւ Ներկայացուցիչներու Զամահայկական Զամաժողով»

Զինգշաբթի, 15 Սեպտեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը, իր տիկնոջ ընկերակցութեամբ, մէկ շաբթուայ համար այցելեց Զայաստան, մասնակցելու Սեպտեմբեր 19-20 Երեւանի մէջ կայանալիք Սփիւռքի Կազմակերպութիւններու Ղեկավարներու եւ Ներկայացուցիչներու Զամահայկական

Համաժողովին:

Համաժողովին Սփիւռքէն ու Հայրենիքէն մասնակցեցան աւելի քան 500 ներկայացուցիչներ: Առաջին օրուայ հանդիսաւոր բացման արարողութենէն ետք, որ տեղի ունեցաւ «Կարէն Տէմիրճեան» մարզահամերգային համալիրէն ներս, յաջորդաբար հանդէս եկան Հայաստանի եւ Ղարաբաղի Նախագահները, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսները, Հայ Կաթողիկէ պատրիարքն ու Հայ Աւետարանական եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի նախագահը, Հայկական աւանդական երեք կուսակցութիւններու եւ այլ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Ապա, ՀՀ նախագահին կողմէ տրուած ընդունելութենէն ետք, մասնակիցները բաժնուեցան չորս խումբերու՝ քննարկելու հետեւեալ նիւթերը: Առաջին՝ Լեզուի եւ Կրթութեան, երկրորդ՝ Երիտասարդական հիմնախնդիրներ, երրորդ՝ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առիթով տարածաշրջանային յանձնախումբերու գործունէութիւն, չորրորդ՝ Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման կառուցակարգեր: Հոս նշենք, թէ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Մահտեսեան խօսք առնելով յայտնեց իր տեսակէտները եւ ապա կատարեց շինիչ առաջարկներ, Հայաստան-Սփիւռք գործակցութեան զարգացման մեքանիզմները նիւթին շուրջ: Երկու օրուայ ընթացքին մանրամասնութեամբ քննելի ու բիւրեղացնելի ետք վերոնշեալ նիւթերը, տեղի ունեցաւ Համաժողովի Լիագումար նիստ, որ ամփոփեց երկու օրուայ աշխատանքները: Համաժողովի աւարտին, հրապարակուեցաւ հրռ-չակագիր մը, որու միջոցով մասնակիցները վերահաստատեցին հայ ժողովուրդի միասնական կամքը, վճռականութիւնն ու պատասխանատուութիւնը, հետեւողականօրէն նպաստելու Հայկական Պետութեան հզօրացման ու յառաջընթացին, Արցախի անվտանգութեան ապահովութեան, Հայկական Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտումին, Սփիւռքի կազմակերպութիւններու զօրացման, հայապահպանութեան եւ Հայ ինքնութեան ամրապնդման՝ համախմբուելով Հայ եկե-

ղեցույ շուրջ:

Համաժողովը վերջ գտավ ՀՀ Վարչապետին կողմէ տրուած հիւրասիրութեամբ, որմէ ետք երեկոյեան ժամերուն տեղի ունեցաւ համերգ մը:

Յաջորդ օրը, Հանրապետութեան Հրապարակին վրայ տեղի ունեցաւ զօրահանդէս՝ նուիրուած Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 20-ամեակին, իսկ երեկոյեան բացումը կատարուեցաւ Հայ Ոսկերիչներու Համաշխարհային Միութեան ցուցահանդէսին, որուն յաջորդեց տպաւորիչ Տօնական Համերգ մը՝ Հանրապետութեան Հրապարակին վրայ:

Պարգևատրում



Նախքան Համաժողովին բացումը, Շաբաթ, 17 Սեպտեմբեր 2011-ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-ամեակին առիթով, Նախագահ Սերժ Սարգսեան, նախագահական պալատին մէջ, պարգևատրեց մշակոյթի ներկայացուցիչներ եւ քաղաքական ղեկավարներ, որոնք իրենց ներդրումը ունեցած են Հայաստանի եւ Սփիւռքի մէջ:

Այս առիթով, Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան պարգևատրուեցաւ «Մխիթար Գոշ» շքանշանով, հայապահպանութեան գործընթացին եւ հայրենիքին մատուցած ծառայութիւններուն, ինչպէս նաեւ Զայաստանի Պետութեան եւ օտար երկիրներու պետութիւններուն միջեւ բարեկամութեան ակնադրութեան մեծապէս նպաստելուն համար:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Երկուշաբթի, 4 Յուլիս 2011-ին, «Քլէօբաթրա» պանդոկին մէջ, Պրն. Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի Փոքրամասնութիւններու հարցերով զբաղող Խորհրդատու Սարմինի պատուիրակութեան հետ, քննարկելու համար Կիպրահայ համայնքի գծով յանձնախումբի տեղեկագիրին մէջ տեղ գտած առաջարկներուն գործադրութիւնը:

Երեքշաբթի, 5 Յուլիս 2011-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Աշխատանքի եւ Ընկերային Ապահովութեան նախարարուհի Տիկին Սոտիրուլլա Խարալամպուսին հետ, օտարապատակներու աշխատանքային



հրամաններու հետ կապուած հարցերուն մասին խորհրդակցելու նպատակով:

Ուրբաթ, 8 Յուլիս 2011-ին, Պրն. Մահտեսեան ներկայ գրտնուեցաւ Յունաստանի Դեսպան Վասիլիս Փափաեուաննույի տուած ճաշկերոյթին, ի պատիւ Ամերիկայի Յոյն համայնքի Արքեպիսկոպոս Տիմիթրիոսի: Այս պաշտօնական հրաւերին ներկայ էին Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Տիմիթրիս Խրիստոֆիաս, Կիպրոսի Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ պետ Խրիստոստոմոս Բ. Արքեպիսկոպոս, Կրօնական Փոքրամասնութիւններու ներկայացուցիչներ եւ այլ պետական անձնաւորութիւններ:

Ուրբաթ, 22 Յուլիս 2011-ին, Կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչը աշխատանքային ճաշ-հանդիպում մը ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի Ռեկտոր Կոստանդինոս Խրիստոֆիտիսին հետ, կրթական նոր տարեշրջանի Հայերէն լեզուի դասընթացքներուն եւ հայ աշակերտներու Կիպրոսի Համալսարան յաճախելու հարցերուն կապակցութեամբ:

Ուրբաթ, 12 Օգոստոս 2011-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան, Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս, Թեմական եւ Վարչական ժողովներու ատենապետներ եւ կարգ մը վարչական անդամներ, Ազգային Առաջնորդարանին մէջ ծանօթացման հանդիպում մը ունեցան UNDP-ACTի նորանշանակ պատասխանատու Պրն. Քրիստոֆըր Լուիզի հետ: Տեսակցութեան ընթացքին արծարծուեցան Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ու շրջակայքի վերանորոգութեան աւարտէն ետք կառոյցին գործածութեան կարելիութիւնները:

Երկուշաբթի, 12 Սեպտեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Բիւզանդական Թանգարանի եւ Արք. Մակարիոս Գ.-ի Արուեստի Կեդրոնի տնօրէն Դոկտ. Իոաննիս Իլիատիսին եւ Ընդհանուր տնօրէն Դոկտ. Անտրէաս Ֆիլաքտուիին հետ, ներկայութեամբ Տէր եւ Տիկին Արսէն եւ Վերոնիքա Գալֆայաններու, Կիպրոսի մէջ յաջորդ

տարի կայանալիք Հայկական Ձեռարուեստներու ցուցահանդեսին առնչութեամբ:

Կիպրահայ գաղութի կեանքէն

Ուրբաթ, 1 Յուլիս 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Հայ երիտասարդաց Միութեան կազմակերպած «Հազար եւ մէկ գիշերներ» ճաշերոյթին, որ տեղի ունեցաւ ՀՍԸՄ-ՀԵՄի ակումբին մէջ:

Ուրբաթ, 23 Սեպտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրոսի Ազգային Իշխանութեան եւ Մարոնիթ Համայնքի Արքեպիսկոպոսարանի կազմակերպած «Ալ Ֆայիա» երգչախումբի ելոյթին, որ տեղի ունցեալ Նիկոսիոյ «Փասիտի» սրահին մէջ, ղեկավարութեամբ Պարգեւ Թասլազեանի: Համերգին մաս կազմեց նաեւ Համազգայինի «Սիփան» պարախումբը:

Կիրակի, 25 Սեպտեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Լիմասոլի Ս. Գէորգ եկեղեցւոյ անուանակոչութեան առիթով մատուցուած Ս. Պատարագին:

Ուրբաթ, 30 Սեպտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Լառնաքայի Հայ Ակումբի կազմակերպած ընթրիք-հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Լառնաքայի «Սան Հոլ» պանդոկին մէջ, նուիրուած ակումբի հիմնադրութեան 80-ամեակին:

Շնորհաւորագիր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 12 Սեպտեմբեր 2011 թուակիր նամակով մը, շնորհաւորեց Pharos Arts Foundation-ը ու անոր նախագահ Պրն. Կարօ Քէիւեանը, Ֆրանսայի դեսպանին կողմէ Արուեստի ու Մշակոյթի Ասպետի շքանշանով պարգեւատրուելուն առիթով: Ան գնահատեց անոր տարած հսկայական աշխատանքը Կիպրոսի մէջ մշակոյթի զարգացման ոլորտէն ներս:

Երկուշաբթի 7 Նոյեմբեր 2011-ին սկսեալ

Երեսփոխանական Գրասենեակէն

Անվճար կրնաք ստանալ

«Հայերը Կիպրոսի Մէջ»

Վաւերագրական ժապաւենի

Յունարէն կամ Անգլերէն

Տարբերակը

**ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցէ office@armenianmp.com

Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy